ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ «ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ԿԱԼԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ» ԵՎ «ՊԱՇՏՊԱՆԸ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ» ԹԵՄԱՆԵՐՈՎ

19.02.2015 16:07

ՀՀ փաստաբանների պալատի կողմից հավատարմագրված Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) հայաստանյան ներկայացուցչությունը փաստաբանների համար կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ:

Դասընթացները տեղի կունենան 2015թ. փետրվարի 21-ին և 28-ին Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) հայաստանյան ներկայացուցչության գրասենյակում (ք. Երևան, Ալեք Մանուկյան, 9 շենք, 4-րդ հարկ, 406 սենյակ), ժամը 11:00-ից մինչև 15:00-ը:

Դասընթացների թեմաներ են.

1. «Մինչդատական կալանքի թույլտվության վերաբերյալ դատական ակտերի առարկան և չափորոշիչները» (փետրվարի 21).
2. «Պաշտպանը մինչդատական վարույթում» (փետրվարի 28):

Փետրվարի 21-ի դասընթացը կվարի Դավիթ Խաչատուրյանը: Փետրվարի 28-ի դասընթացը կվարի Հայկ Ալումյանը:

Տեղերը սահմանափակ են' 25 մասնակից յուրաքանչյուր դասընթացի համար: Մասնակցելով դասընթացին' յուրաքանչյուր փաստաբան կլրացնի պարտադիր վերապատրաստման 6 ժամ: Խնդրում ենք գրանցվել միայն այն փաստաբաններին, ովքեր վստահ են, որ կմասնակցեն դասընթացներին: Լրացուցիչ տեղեկությունների և դասընթացներին գրանցվելու համար խնդրում ենք մինչև 2015թ. փետրվարի 27-ը զանգահարել ABA/ROLI Հայաստանյան ներկայացուցչության գրասենյակ 554-991 և 556-449 հեռախոսահամարներով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })